

հողերը պարպուեցան ու քանդակազարդ մարմարեայ սիւները մէջտեղ հանուեցան :

Մեծապէս բաղձալի էր որ Բեթղեհէմցի հայերը յիշէին Յերոնիմոսի պանծալի համալսարանը ու ջանադիր ըլլային իրենց փոքրիկ դպրոցը հոգալ ու իրենց տղոցը սորվեցնել կրօնք եւ ուսումն, որպէս զի կարողանային հոգեւոր ծառայութիւն մը մատուցանել Գրիստոսի Ս. Ծննդեան եկեկեցիին :



Ի Գ

Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՔՆ ՈՒ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՄԷՋ

Երուսաղէմի հարաւակողմը գտնուող Սիոնի քաղաքամասին մէջ շինուած է Ս. Յակոբեանց վանքը : Այդ քաղաքամասին Հայոց քաղ անունը կը տրուի, որ իր ամբողջութեամբը Ս. Յակոբեանց ստացութիւնն է. և անոր մէջ են քաղաքացի Հայոց բնակութեան տուները, որոնք թէև վանքապատկան կալուածներ են, այլ տեղացի Հայերը ձրիարար կը բնակին : Թաղին բոլոր շէնքերը եւ գետիները, հիւսիսէն հարաւ, այսինքն Ս. Փրկչի գերեզմանատան ետեի դուռէն մինչև Ասորոց վանքը իբր 450 մէթր երկայնութիւն և արեւելքէն արեւմուտք, այսինքն պարտէզներու ետեի պարապէն մինչև արեւելակողման տուներուն ծայրը, իբր 300 մէթր լայնութիւն ունեցող, անկանոն քառանկիւն մը կը կազմեն, մերձաւորաբար 150,000 քառակուսի մէթր տարածութեամբ, որուն մէկ մասը բուն վանական շէնքերն են, մաս մըն ալ քաղաքացոց բնակարաններ և մաս մ'ալ պարտէզներ : Հայոց քաղաքամասը, և մանաւանդ մայրավանքին զիրքը, եզակի ըսուելու չափ նշանաւոր է, և հարեան ազգու-